ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 24.06.2020թ. ներկայացված (25.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դերձակի ծառայությունների (կոստյում բամբակյա կեպիով)» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցմանը:

Համաձայն գնահատող հանձնաժողովի 30.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետի՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող

փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտի, որում բացակայում է մասնակցի կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշեց «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար (անհամապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել նրա հայտը: Նույն արձանագրության 3.3. կետի համաձայն՝ որոշում կայացվեց 09.04.2020թ. ծանուցել մասնակիցներին հրավիրել 14.04.2020թ. իրականացվելիք միաժամանակյա բանակցությունների:

Իսկ նույն արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է ընտրված մասնակից՝ հայտարարվել է անգործություն:

«Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ն 17.04.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել բողոք, որով վիճարկել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները և խնդրել բողոքներ քննող անձին պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դերձակի ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի կողմից 10.06.2020թ.-ին կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է «Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից 17.04.2020թ.-ին ներկայացված բողոքը և պարտավորեցվել գնահատող հանձնաժողովին՝ քննության առնել ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի եզրակացությամբ տրամադրված «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգին հայտ ներկայացնելու նպատակով հայտերի նախապատրաստման համակարգ մուտքագրված՝ «ԴԻՄՈՒ-Մ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» թիվ 1 հավելվածը,

«ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ» թիվ 2 հավելվածը և թիվ ԱԲԵՆ20/48-23 երաշխիքի լուսապատճենը:

Եվ արդեն թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 բողոքի վերաբերյալ կայացված որոշումից հետո գնահատող հանձնաժողովը կատարել է բողոքներ քննող անձի կողմից կայացրած որոշումը և 19.06.2020թ. տեղի ունեցած նիստի 4-րդ արձանագրությամբ՝ «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ին միանգամից ճանաչել են ընտրված մասնակից՝ առանց մասնակիցներին նոր գների նվազեցման բանակցությունների հրավիրելու:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հրավերի 8.6. կետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված

ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման

հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, հարկ ենք համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային

ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված

անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից՝ առանց նոր գների նվազեցման բանակցություններ հրավիրելու, որի պարագայում՝ «Գևգրուպ» ՍՊԸ-ն՝ ուղղակի զրկվել է առաջարկված գնի նվազեցում կատարելուց:

Մինչդեռ դեռևս 09.04.2020թ. գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել մասնակիցներին հրավիրել 14.04.2020թ. իրականացվելիք միաժամանակյա բանակցություններին, ինչը այս որոշումից հետո կրկին չի կազմակերպվել»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել համապատասխան որոշում՝ ընթացակարգի բոլոր մասնակիցներին գների նվազեցման բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 30.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով պետական մարմնի պարզաբանումը, համաձայն որի «Գևգրուպ» ՍՊԸ-ն արդեն ստացել է իրեն հուզող պատասխանը, որը ըստ էության հանդիսանում էր բողոքի պահանջ, այն է՝ այլևս գնահատող հանձնաժողովը իրավունք չունի գների նվազեցման բանակցությունների հրավիրելու, քանի որ բոլոր չափաբաժինների մասով առկա են մեկից ավելի մասնակիցներ, ուստի խնդրում ենք 24.06.2020թ.-ին «Գևգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքը թողնել առանց քննության»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2020թ. ժամը 10:10-ին և 08.07.2020թ. ժամը 11:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ, «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունները: Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 30.03.2020թ. ժամը 11:00-ն:

Քանի որ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտում՝ armeps.am համակարգում բացակայել են վերջինիս կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատելու մասնակցի հայտը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները՝ որոշում է կայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել այն:

Հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունների հայտերը, համապատասխանաբար՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, և քանի որ նշված չափաբաժինների մասով հրավերի պայմաններին համապատասխանող ոչ գնային պայմանները բավարարող գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները միակն են եղել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ

հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել և 09.04.2020թ. մասնակիցներին ծանուցել, որ գների նվազեցման նպատակով 14.04.2020թ. ժամը 12:30-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպվելու են բանակցություններ:

Բանակցություններին ներկայացել է միայն «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը և նվազեցրել կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը: «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներկայացել բանակցություններին:

15.04.2020թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ թիվ 1 չափաբաժնի մասով,

2) «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ին՝ թիվ 2 չափաբաժնի մասով:

17.04.2020թ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն բողոքարկել է Ընթացակարգի 3-րդ արձանագրության 2.2 կետով՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, որը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. /հրապարակված՝ 12.06.2020թ./ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է:

19.06.2020թ.՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել 30.03.2020թ. թիվ 3-րդ արձանագրության 2.2 կետի որոշումը:

19.06.2020թ. հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ», «Մետաքսկոմբինատ» ՍՊ և «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ ընկերությունների հայտերը: Քանի որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.4 կետի համաձայն ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ուստի ներկայացված գնային

առաջարկների հիման վրա Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջների և Ընթացակարգի հրավերի 1-ի մասի 8.6 կետի համաձայն՝ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ, կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գործելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների շրջանակներում և հիմք ընդունելով վերոգրյալ որոշման պահանջները, չի ունեցել որևէ իրավասություն՝ գների նվազեցման նոր բանակցություններ վարելու գործընթաց կազմակերպելու համար, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից նոր բանակցություններ չեն կազմակերպվել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2020թ. ժամը 10:10-ին և 08.07.2020թ. ժամը 11:17-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը խմբավորված է «2» չափաբաժնում:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ, «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունները:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 24.06.2020թ. ներկայացված բողոքը և բողոքը առանց քննության թողնելու 30.06.2020թ. միջնորդությունը, ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական

նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որը խմբավորված է «2» չափաբաժնում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲ, «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջը, «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատել է անբավարար Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել, այն հիմնավորմամբ, որ armeps.am համակարգում բացակայել են վերջինիս կողմից ներկայացվելիք փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հայտերի գնահատման արդյունքում Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունների հայտերը, համապատասխանաբար՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, և քանի որ նշված չափաբաժինների մասով հրավերի պայմաններին համապատասխանող ոչ գնային պայմանները բավարարող գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները միակն են եղել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել և 09.04.2020թ. մասնակիցներին ծանուցել՝ գների նվազեցման նպատակով 14.04.2020թ. ժամը 12:30-ին հրավիրվող բանակցություններ վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 15.04.2020թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի օրը, Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Մետաքսկոմբինատ» ՍՊԸ-ն ճանաչվել են ընտրված մասնակիցներ և սահմանվել է անգործության ժամկետ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ 17.04.2020թ. «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն բողոքարկել է Ընթացակարգի 3-րդ արձանագրության 2.2 կետով՝ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը մերժելու Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, որը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. (հրապարակված՝ 12.06.2020թ) թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշմամբ բավարարվել է: 19.06.2020թ. հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ

կապված բողոքներ քննող անձի 10.06.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 որոշումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է դադարեցնել 30.03.2020թ. թիվ 3-րդ արձանագրության 2.2 կետի որոշումը:

Նույն արձանագրության համաձայն՝ 19.06.2020թ. «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ն ներկայացված գնային առաջարկի հիման վրա Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ 30.06.2020թ. «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով պետական մարմնի պարզաբանումը, համաձայն որի «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն արդեն ստացել է իրեն հուզող պատասխանը, որը ըստ էության հանդիսանում էր բողոքի պահանջ, այն է՝ այլևս գնահատող հանձնաժողովը իրավունք չունի գների նվազեցման բանակցությունների հրավիրելու, քանի որ բոլոր չափաբաժինների մասով առկա են մեկից ավելի մասնակիցներ, ուստի խնդրում ենք 24.06.2020թ.-ին «Գևգրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքը թողնել առանց քննության»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 01.07.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 միջանկյալ որոշմամբ, հաշվի առնելով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 30.06.2020թ. ներկայացված՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքն առանց քննության թողնելու մասին միջնորդությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետը, ԳԲՔԱ-ՆԳ-2020/57 բողոքը համարել է որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ:

Անդրադառնալով բողոքով ներկայացված փաստերին՝ արձանագրում եմ, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 24.06.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն զրկվել է առաջարկված գնի նվազեցում կատարելուց, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ-ին ճանաչել է ընտրված մասնակից՝ առանց նոր գների նվազեցման բանակցություններ հրավիրելու:

Միաժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել համապատասխան

որոշում՝ ընթացակարգի բոլոր մասնակիցներին գների նվազեցման բանակցությունների հրավիրելու վերաբերյալ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է, որ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ ***երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ <u>հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ</u> կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:***

Ընթացակարգի հրավերի 1-ի մասի 8.6 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ ***<u>հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ</u>*** կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումներով հստակ սահմանվում են, որ արգելվում է գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցությունները՝ սահմանելով բացառիկ դեպքեր, որոնք սպառիչ թվարկված են:

Անդրադառնալով Ընկերության ներկայացրած բողոքի պահանջին՝ հայտնում եմ հետևյալը. քանի որ Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի նիստի

թիվ 3 արձանագրությամբ հայտերի գնահատման արդյունքում «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, արդյունքում հրավերի պահանջներին համապատասխանող են գնահատվել «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերությունների հայտերը, համապատասխանաբար՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, և քանի որ նշված չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխանող ոչ գնային պայմանները բավարարող գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները միակն են եղել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի 1-ի մասի 8.6 կետի 1-ին ենթակետի պահանջները, 09.04.2020թ. «ԳԵՎԳՐՈՒՊ» և «Մետաքսկոմբինատ» ՍՊ ընկերություններին ծանուցել է գների նվազեցման նպատակով 14.04.2020թ. ժամը 12:30-ին հրավիրվող բանակցությունների վերաբերյալ: Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/38 իրավապարտադիր որոշումը, քննության առարկա դարձնելով «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը, նիստի թիվ 4 արձանագրությամբ վերջինիս, ներկայացված գնային առաջարկի հիման վրա, Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչել է ընտրված մասնակից: Սույն մասով արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի՝ նիստի թիվ 4 արձանագրությամբ «Արցախ Կարի Կոշիկի Արտադրական Միավորում» ՓԲԸ-ի հայտը քննության առնելու պայմաններում վերացել է կրկին գների նվազեցման նպատակով բանակցություններ հրավիրելու համար նախատեսված իրավական հիմքը, այն է՝ ***երբ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ,*** հետևաբար գտնում եմ, որ սույն մասով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 24.06.2020թ. ներկայացված բողոքը՝ որպես 01.07.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**